

Շրջակա միջավայրի գնահատման զեկույցների վերաբերյալ խորացված դասընթացը Հայաստանի բնապահպանական և վիճակագրական մարմինների համար ֆինանսավորում է ԵՄ ծրագիրը

ՀՀ վիճակագրական կոմիտեն (ԱՄՄՍՍՍ) և ՀՀ բնապահպանության նախարարությունը տեղեկացնում են, որ դասընթացը տեղի կունենա 2019թ. հունիսի 4-ից 6-ը ք. Երևանի «ԱՆԻ» հյուրանոցի «ԴՎԻՆ» սրահում՝ ՀՀ պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ:

Հունիսի 4-6, 2019թ.

Երևան, Հայաստան

Շրջակա միջավայրի եվրոպական գործակալության (ՇՄԵԳ) և Սլովակիայի շրջակա միջավայրի գործակալության (ՄՇՄԳ) մասնագետները կանցկացնեն շրջակա միջավայրի զեկույցների և գնահատման գործիքների վերաբերյալ դասընթաց Հայաստանի մասնագետների համար: Դասընթացը կնպաստի ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը՝ քաղաքականության մշակողներին և հասարակությանը ժամանակին, համապատասխան և հուսալի տեղեկատվություն տրամադրելու համար: Տվյալների հավաքագրման, շրջակա միջավայրի գնահատման և հաշվառման ոլորտներում կարողությունների զարգացումը համընդհանուր ջանքերի և մոտեցումների անբաժանելի մասն է համաշխարհային գլոբալ խնդիրների լուծման համար, ինչպիսիք են կլիմայի փոփոխությունը և գլոբալ տաքացումը: Սա համահունչ է միջազգային պարտավորություններին՝ կապված կայուն զարգացման նպատակների (ԿԶՆ) 17 կարողությունների զարգացման, տեխնոլոգիաների և համակարգային խնդիրների հետ. «Կատարելագործելու միջոցները և գլոբալ գործընկերությունը կենսագործել կայուն զարգացման համար»:

Այս միջոցառումը մաս է կազմում Եվրամիության կողմից ֆինանսավորվող տեխնիկական աջակցության, բարելավում է ինստիտուցիոնալ և մեթոդաբանական կարողությունները շրջակա միջավայրի գնահատման հաշվետվություններում և նպաստում է շրջակա միջավայրի կառավարման արդյունավետությանը: Բազմակողմանի բնապահպանական գնահատումները հնարավորություն են տալիս քաղաքականության մշակողներին կատարել նպատակաուղղված գործողություններ և ցույց տալ համակարգային կապեր քաղաքականության միջամտության համար: Այս կարողությունների հզորացումը կօգնի ապահովել շրջակա միջավայրի վերաբերյալ զեկույցների կազմանը, որոնք կնպաստեն շրջակա միջավայրի հարցերի տարածաշրջանային գլոբալ արձագանքներին:

Ընդհանուր տեղեկություններ

Շրջակա միջավայրի եվրոպական գործակալությունն իրականացնում է Եվրոպական հարևանության գործիքի ներքո «Շրջակա միջավայրի տեղեկատվական միասնական համակարգի սկզբունքների և փորձի ներդրում» (ԵՀԳ ՇՄՏՄՀ Ալ II) քառամյա ծրագիր, որը ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Ծրագիրն աջակցում է Արևելյան գործընկերության երկրներին՝ Հայաստանին, Ադրբեջանին, Բելառուսին, Վրաստանին, Մոլդովային և Ուկրաինային շրջակա միջավայրի զեկույցների կանոնավոր մշակման



գործընթացում՝ ամրապնդելու շրջակա միջավայրի կառավարումը:

Ծրագրի գործողությունները հիմնվում են ՇՄԵԳ-ի փորձառության և ԵՄ անդամ պետությունների լավագույն ազգային փորձի վրա՝ զարգացնելու շրջակա միջավայրի և վիճակագրական կառույցների ինստիտուցիոնալ կարողությունները:

Ծրագիրն աջակցում է շրջակա միջավայրի տեղեկատվական միասնական համակարգի սկզբունքների և փորձի ներդրմանը՝ հզորացնելով շրջակա միջավայրի բնագավառի տվյալների, կենսաբազմազանության, ջրի, հողի, թափոնների և օդի ցուցանիշների մշակման ու գնահատման զեկույցների պատրաստման կարողությունները: Ծրագիրը զարգացնում է երկրների ինստիտուցիոնալ կարողությունները շրջակա միջավայրի գնահատման և հաշվառման, և հաղորդակցության ոլորտներում:

Շրջակա միջավայրի եվրոպական գործակալությունը եզակի կառույց է, որը կարողանում է ստեղծել շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվություն ու գիտելիքներ: Իր գործունեության շնորհիվ ՇՄԵԳ-ն աջակցում է կարողությունների զարգացմանը որպես ապացույցների վրա հիմնված գործընթաց և երկարաժամկետ անցում դեպի կայուն հասարակություն: Այն ակտիվ է Եվրոպական հարևանության գործիքի (ԵՀԳ) Արևելյան գործընկերության վեց երկրներում, որոնց համար ՇՄԵԳ-ը հանդես է գալիս որպես շրջակա միջավայրի և վիճակագրական հաստատությունների զարգացման կենտրոն:

ENI SEIS II East project : <https://eni-seis.eionet.europa.eu/east/governance>

Assessment area of the project: <https://eni-seis.eionet.europa.eu/east/areas-of-work/Indicators%20and%20Assessments>

European Environment Agency's European environment – state and outlook 2015 report: <https://www.eea.europa.eu/soer>

European Neighbourhood Policy And Enlargement Negotiations:

https://ec.europa.eu/neighbourhood-enlargement/neighbourhood/eastern-partnership_en

Slovak Environment Agency: <http://www.sazp.sk/en/the-environment/>

Contact information: Victoria Goncharova

Victoria.goncharova@eea.europa.eu

+45 33 42 59 39

Twitter handle: @EUenvironment

Visual identity:





Photo credit © Desmond Coyles, Environment & Me/EEA